

“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆՔ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ”. ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1886

ԹԻՒ 1

ԲԵԹԼԵՆԷՄ

Այս պատկերը կը ցուցունէ բեթլէհեմի արգի դիւղը, արևելեան կողմէն նայելով: Թէպէտ երբէք եղած չէ մեծ կամ քաղաքականապէս կարևոր տեղ մը, միշտ պիտի ըլլայ սիրելի քրիստոնէից իբր տեսարանն ուր Սուրբ Գրոց կարևորագոյն դէպքերէն ոմանք պատահեցան: Հոս էր որ Մովսէսը Գաբիէն Հուրի որ այնչափ կը սիրէր իւր կետուրը որ մտացաւ իւր հայրենիքը և ազգականները՝ եկաւ բնակիլ, և հոս վարձատրուեցաւ ըլլալով կին հարուստ Բոոսի և նախամայր Յուզայի բոլոր թագաւորաց և թագաւորաց թագաւորին: Հոս ծնաւ Գաիթ, և հոս թէպէտ էր կրտսերագոյնն իւր հօր որ դուրսը նա օծուեցաւ Սամուէլ ըլլալով թագաւոր բոլոր իսրայելի: Այլ մանաւանդ կը յիշենք այժմ թէ բեթլէհեմի մէջ էր որ Յիսուս փրկիչը ծնաւ, որոյ ծնունդը համբարէն քրիստոնէայք կը օճեն տարւոյն այս ժամանակին մէջ: Լաւ գիտէք այդ պատմութիւնը, սիրելի աղայք, և թէ որչափ դեղեցիկ է: Խոնարհ պանդուկը, մտորը փոխան որորանի, հրեշտակաց երգը, հովիւներուն այցելութիւնը, աստղը որ կեցաւ օթևանին վրայ, մոգերուն ընծայները — ասոնց ամէնը նորէն պիտի կարգաք այս ճնունդին առթիւ: Երբէք այսպիսի բերկրալից դէպք մը պատահած չէր աշխարհիս վրայ յառաջագոյն, և երբէք չպիտի պատահի մինչև նոյն Յիսուսը գայ վերստին պայծառ ամպերուն վրայ իւր բոլոր սուրբ հրեշտակներուն հետ:

Բաղմաթիւ ուխտաւորք կ'երթան բեթլէհեմ ամէն տարի: Եկեղեցի մը կառուցուած է դիւղին մօտ այրերէն միոյն վրայ: Քրիստոսի ծննդենէն 150 տարի վերջը սկսելով, այս տեղը նրկատուած է իբր տեղի քրիստոսի մար-


նէր, և մտերս ճամբորդող այցելու մը կ'ըսէ, «Նուստացուցիչ նախապաշարումը, և ամբիպի գոտութիւնը որ կը սիրեն հոս անարգանք են քրիստոնէութեան»: Ս. յնպիսի սաստիկ թշամութիւն կը տածեն տարբեր յար-



ԲԵԹԼԵՆԷՄ

դեղութեան, և հաւանական է թէ իրապէս այս է տեղը: Բայց կան շատ բաներ այժմ որ կը նուազեցունեն այս տեղը այցելելու հաճութիւնը: Փոխանակ պարզ օթևանին ուր մեր Տէրը ծնաւ, կան մի քանի պճնեալ մասաւու-

անուանութենէ քրիստոնէայք ընդդէմ միմեանց որ թուրք զօրաց գունդ մը կը կենայ եկեղեցին՝ արդեւելու արիւնհեղութիւն ի մէջ տարբեր յարանուանութենէ վանականաց և ուխտաւորաց:



ՏՂԱՅՈՑ ԿՐՕՆԸ

Եթէ տղայ մը կը սիրէ զՏէր Յիսուս Բրիսաոսս, կրնայ ըլլալ աստուածապաշտ որչափ որ կրնայ սպասուել տղէ մը, թէպէտ նա կարող չըլլայ խօսիլ աղօթքի ժողովոյ մէջ կամ չըլլայ եկեղեցւոյ պաշտօնեայ կամ քարոզիչ: Չպահանջուիր անկէ ըլլալ շատ լուրջ կամ չափազանց հանգաւոր: Հարկ չկայ անոր դադարել տղայ ըլլալէ վասն զի է Բրիսաոնեայ: Կրնայ վազել, ցատկել, խաղալ, ծառ ելլել և աղաղակներ հանել ուրիշ տղայոց նման: Բայց բոլոր այդ բաներուն մէջ պարտի ցուցնել Բրիսաոսսի հոգին: Պէտք չէ որ հանէ բերնէն անվայել խօսք և հայհոյութիւն: Պարտի ըլլալ խաղաղասէր, հեղ, զթած և առաստասիրտ: Պարտի փոքր տղայոց օգնել երբ մեծ տղայք կը վխտան անոնց: Պարտի մարել կուտասեր ողին: Պարտի հրաժարիլ չարաց, հալածչաց և խաբեբաներու ընկերակցելէ: Եւ ի վեր քան զամենայն պարտի ժամանակ ժամանակ ցուցնել իւր յատկութիւններն իբրև Բրիսաոնեայ տղայ: Չպարտի միշտ արգելել կամ ընդմիջել խաղ մը ըսելով թէ ինք Բրիսաոնեայ է, այլ պէտք չէ ամենայն ըսել թէ, կը մերժէ ընել այս ինչ բանը վասն զի շիտակ չէ և չար է, կամ վասն զի կը վախնայ Աստուծովէ, և կամ վասն զի Բրիսաոնեայ է: Պէտք չէ որ միաբանի այնպիսեաց հետ որ կը ծաղրեն կրօնական և սրբազան բաները, այլ երբ հանդիպի ծաղր ընողներու, պարտի ըսել քաջութեամբ անոնց թէ ի սրտէ կը յարգէ Աստուծոյ վերաբերեալ բաները:

ԳՐՆԿՈՅԻ ԵՐԿԻՐԸ

Չարմանայի կը թուի որ քաղաքակիրթ մարդիկ գեռ նոր ճանչնան աշխարհիս մեծագոյն գետոց մին, և սակայն այս է իրողութիւնը: Երբ պացիք երկար ժամանակէ հետէ բնակութիւն հաստատած էին Գոնկոյ գետոյն բերնին մօտ, և անկէ վեր ելած էին քանի մը մըն, սակայն բնաւ չէին կարծած թէ անոր երկայնութիւնն եղած ըլլար Ափրիկէի զրեթէ լայնքին չափ: Ասկէ միայն 12 տարի առաջ

հրատարակուած աշխարհագրութիւնք կը տեղեկացունեն զմեզ թէ մինչև այն ատեն Գոնկոյ գետը հետազօտուած էր բերնէն մինչև 280 մըն վեր: Այժմ, չնորհիւ Մր. Սթանլիի և ուրիշ ճանապարհորդաց աշխատութեանց, գետնք թէ յիշեալ գետն ունի իբր 3,000 մըն երկայնութիւն: Հաւանականապէս մեր փոքրիկ ընթերցողներէն քիչեր երբէք անսած են այսպիսի մեծ գետ մը: Չկայ Եւրոպայի, թերևս նաև Ասիոյ մէջ այնպիսի մեծ գետ: Կան

ժամն 30 մըն, որ շատ աւելի արագ է այս քան զարագութիւն որ և իցէ սրընթաց չողենաւի: Եւ միայն մեծութիւնը չէ որով կարևորութիւն ստացած է Գոնկոյ: Մր. Սթանլիի հաշուոյն նայելով իբր 30 միլիոն ժողովուրդ կը բնակին երկրին մէջ զոր կ'ուղէ Գոնկոյ: Այս գետին վրայ նաև արկելով վաճառականք կը տանին այն ժողովրդոց Եւրոպայի և Ամերիկայի ապրանք և ձեռագործութիւնք, և Բրիսաոնեայ ուսուցիչք՝ Աւետարանը:



ԱՌՅԻՏՐԱԿԱՆ ԿԱՅՆ Ի ԳՐՆԿՈՅ

մէկ կամ երկու գետեր որ երկայն են գրեթէ անոր չափ, բայց անոնց շրջն քանակութիւնը հաւասարիւր անոր:



ԲՊԱՐԱՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Արևելեան այս ամբողջ կիսագնդոյն մէջ միայն Նեղոս գետը կը գերազանցէ զԳոնկոյ մեծութեան մասին, և թերևս մինչև իսկ Նեղոս աւելի քիչ ջուր կը պարպէ ի ծով քան որչափ Գոնկոյ: Երևակայեցէք գետ մը որ ընթանայ

Այս երեսին վրայ գրուած երկու պատկերներուն մեծը կը ցուցնէ առևտրական կայան մը, ուր կուգան վաճառականաց նաւակներ, հոն կայ մէկ սուն Եւրոպացւոյ, և քանի մը բնիկ խրճիթներ: Միւսն է Պոլոպոյի թագաւորին, Իպաքայի, պատկերը: Այս թագաւորին գլխարկը հետաքրքրաշարժ է յոյժ, ոչ միայն իւր ձևոյն կողմանէ այլ վասն զի նա կը դնէ իւր գլխարկին մէջ շատ լաթեր և բոլոր իրեն սեպհական թանկագին բաները:

«ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՉԵՄ ԽՕՍԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ»

Քանի մը տարի առաջ տղայ մը Ուէպսթըր անուն, և իբր չորս տարուան, իւր հօր անէն տարուեցաւ մեծ հօրը տունը ուր մնաց քանի մը շաբաթ: Անոր մեծ հայրն էր Բրիսաոնեայ մարդ, և միշտ Աստուծոյ օրհնութիւնը կը հայցէր սեղանին վրայ ճաշելէ առաջ, և կը կարդար Սուրբ Գիր-

քէն գլուխ մը և աղօթք կ'ընէր առաջտուն երբ նախաճաշը կ'աւարտէր :

Երբ փոքրիկ Ռէպոթըրը դարձեալ տարուեցաւ իւր հօր տունը, առաջին անգամ որ նստաւ հոն սեղան իւր բարձր աթոռին վրայ, ըսաւ ճաշել սկսելէ առաջ, « Հայր, ինչո՞ւ համար չես խօսիր Աստուծոյ հետ ճաշելէ առաջ, ինչպէս կ'ընէ մեծ հայրը : »

Հայրը պատասխանեց տղուն այս հարցման, « Մեծ հայրը բարի մարդ է : »

« Բայց հայր, » ըսաւ Ռէպոթըրը, « դու բարի մարդ չե՞ս : Ինչո՞ւ համար չես խօսիր Աստուծոյ հետ ինչպէս կ'ընէ մեծ հայրը : »

Տղուն բարի մայրը որ կը նստէր սեղանին միւս կողմը, ըսաւ, « Հայր, այդ Աստուծոյ ձայնն է քեզ ուղղեալ : » Եւ յիշատի էր այն պէս. և այն ատեն առաջին անգամ ըլլալով հայրը, իբրև գլուխ իւր ընտանեաց, մայրը և տղան, խոնարհեցուցին իրենց գլուխները և ընդհատեալ խօսքերով հայցեցին օրհնութիւն սեղանին վրայ : Այս եղաւ սկզբնաւորութիւն մը : Նախաճաշէն ետքը, հայրը կարգաց Սուրբ Գիրքէն և աղօթք ըրաւ, և այսպէս ընել շարունակեց այնուհետև որչափ ժամանակ որ ապրեցաւ :

րիչ և հաճոյական, բայց երբ հովերը կը դիզեն ծովուն կոհակները լերան պէս, երբ նաւը կը դեղւի գինով մարդու նման, և երբ նաւորդը նաւին սաստիկ շարժմանց պատճառաւ պէտք ունին կապուիլ անոր կայմերուն, անատեն լաւագոյն կը համարինք գտնուիլ ցամաքը : Աղէկ է սակայն, որ կան այնպիսիք ևս որ կը սիրեն նաւարկել ովկիանոսին վրայ մինչև իսկ փոթորիկի և ալեկոծութեան ժամանակ : Դա կը յիշեմ թէ երէց եղբայրս Երջափ մեծ փափաք ունէր նաւաստի ըլլալու, և հայրս որչափ աշխատեցաւ մտրել անոր այն փափաքը, բայց չյաջողեցաւ, և այն եղբայրս հուսկ ուրեմն եղաւ նաւաստի : Եւ երբ դարձաւ տուն՝ Չինաստան, Փիլիպպեան կղզիները, Հարաւային

« Մյո՛ւ կընամ, ես կը մեծնամ, և շատ արագ կը մեծնամ, ահա, տես հիմա. միթէ չե՞մ կընար նայիլ սեղանին վրայ : » ըսաւ փոքրիկ տղան իւր ոտից մատներուն վրայ կանգնելով :

Վաճառականը ժպտեցաւ, և այնուհետև անցաւ սեղանին միւս կողմը : « Ես կը խորհէի թէ, ըսաւ, խոշորացոյց պակսիկ մը պէտք ունիմ զքեզ տեսնելու համար, բայց կարծեմ եթէ բաւական մօտ գամ քեզ, կարող պիտի ըլլամ հասկնալ թէ ինչ բանի կը նշմանիս : »

« Ո՛հ, ես աւելի մեծ եմ քան որչափ կը ցուցնէ հասակս, » ըսաւ տղան, « մարդիկ ինձի համար կ'ըսեն թէ շատ աւելի փոքր կ'երևիմ ես քան որչափ եմ իրօք : Տէր իմ, մայրս ուրիշ մէկը չունի բայց յինէն, և տեսայ զնա այս առաւօտ որ կուլար վասն զի կորսընցուցած էր իւր գրպանէն յիսուն փարա : Կը կարծէ թէ տղան որ ժողկեց մեր վառարանին մոխիրները, գողցաւ ստակը, և ես նախաճաշիկ չեմ ըրած մինչև այս ատեն : »

Անատեն տղուն ձայնը հեղձաւ, և արտասուօք լցան անոր կապոյտ աւուրները :

« Կարծեմ կընամ տալ քեզ ստակ որ նախաճաշը ընես, դաւակս, ըսաւ վաճառականը ձեռքը գըրպանը խոթելով, և յետոյ ըսաւ հինգ դահեկաննոց մը բռնելով իւր ձեռքը, « Կը բաւէ՞ այսչափը : »

Տղան շարժեց իւր գլուխն ըսելով, « Շնորհակալ եմ ձեռնէ, տէր, բայց մայրս չուզէր որ ես մուրամ կամ ստակ առնուիմ առանց անոր փոխարէն բան մը ընելու : »

« Իրա՛ւ, » ըսաւ վաճառականը, « և ո՛ւր է հայրդ : »

« Շողենաւով ծովային ճամբորդութեան ելաւ, խորտակեցաւ չողենաւը, և այնուհետև ընաւ բան մը չլսեցինք անոր վրայ : »

Ո՛հ, ինչ ցաւալի բան. բայց դու քաջասիրտ փոքրիկ տղայ ես, և ես կը սիրեմ զքեզ : Տեսնե՛ք, ըսաւ վաճառականը, և քանի մը վայրկեան խորհելէ ետքը, կոչեց իւր քարտուղարներէն մին և հարցուց անոր, « Սանտորըս, դեռ հիւսնո՞ղ է թիւ 4 տղան : »

« Մեռաւ նա երէկ գիշեր, » պատասխանեց միւսը :



ՉՆՈՐՄԻ

ԳԱՌՆԱԼ ՏՈՒՆ ԾՈՎՈՒՆ ԳԱՆՁԵՐՈՎ

Այս պատկերն ինքնին կ'ընէ իւր պատմութիւնը : Կը տեսնուի անոր մէջ ձկնորս մը և անոր երկու որդիքը, որք յաջող ձկնորսութիւն մը ըրած ըլլալով այն օր, առատ ձուկ լեցուցած են իրենց նաւակին մէջ : Եւ հիմա որ արևը մարը կը մտնէ և ամպերը կ'ոսկեղծէ, կը դառնան տուն յաջող հողմով : Չրկնորսը կը պարզէ առադաստը որոյ մէկ փոքր անկիւնը կընայ տեսնուիլ. նաւին ղեկը կառավարելու գործն յանձնուած է կրտսեր որդւոյն : Եւ ինչպիսի՞ մեծ պատասխանատուութեան ներքև կը դդայ աս ղինք իւր այս պաշտօնին հառնոր, և ինչպիսի՞ զօրաւոր ախորժակով՝ այնտի նստին ձկնորսն և իւր երկու որդիք՝ ճաշի զոր զբաղած է պարոնաստի՝ ձկնորսին կիներ :

Պատկերին ներկայացուցածին նման պարագայից մէջ ծովային ճանապարհորդութիւնը կը թուի յոյժ հրապու-

Սմերիկա և կէտ ձուկ որսալու նաւերով Արջային Ովկիանոս ճանապարհորդելէն ետքը՝ որպիսի՞ զարմանալի պատմութիւններ ըրաւ մեզ, տղայոցս : Բայց մենք՝ անոր կրտսերադոյն եղբայրներէն ոչ ոք մինչև իսկ փափաք ունեցաւ ըլլալ նաւաստի :

ՓՈՒՔՐԻԿ ՏՂՈՒ ՄԸ ՈՐՈՇՈՒՄԸ

Օր մը փոքրիկ տղայ մը մտաւ վաճառատուն մը : Վաճառականը նայելով անոր, հարցուց, « Ի՞նչ պիտի գնես այսօր, տղաս : »

« Կերեցէք տէր, ըսաւ տղան, չունի՞ք ինձ յանձնելու գործ մը որ ընեմ այսօր : »

« Ինձի գործ պիտի ընես. լաւ, ի՞նչ տեսակ գործ կընայ ընել քեզի նման փոքր տղայ մը : Հասակդ փոքր է և չես կընար նայիլ անգամ սա սեղանին վրայ : »

պանը խոթելով, և յետոյ ըսաւ հինգ դահեկաննոց մը բռնելով իւր ձեռքը, « Կը բաւէ՞ այսչափը : »

Տղան շարժեց իւր գլուխն ըսելով, « Շնորհակալ եմ ձեռնէ, տէր, բայց մայրս չուզէր որ ես մուրամ կամ ստակ առնուիմ առանց անոր փոխարէն բան մը ընելու : »

« Իրա՛ւ, » ըսաւ վաճառականը, « և ո՛ւր է հայրդ : »

« Շողենաւով ծովային ճամբորդութեան ելաւ, խորտակեցաւ չողենաւը, և այնուհետև ընաւ բան մը չլսեցինք անոր վրայ : »

Ո՛հ, ինչ ցաւալի բան. բայց դու քաջասիրտ փոքրիկ տղայ ես, և ես կը սիրեմ զքեզ : Տեսնե՛ք, ըսաւ վաճառականը, և քանի մը վայրկեան խորհելէ ետքը, կոչեց իւր քարտուղարներէն մին և հարցուց անոր, « Սանտորըս, դեռ հիւսնո՞ղ է թիւ 4 տղան : »

« Մեռաւ նա երէկ գիշեր, » պատասխանեց միւսը :

«Ո՛հ, կը ցաւիմ լսելով այդ լուրը : Հոս կայ փոքրիկ տղայ մը և կրնայ անցնիլ անոր տեղը : Ի՞նչ կը վճարուէր թիւ 4ի,» հարցոց վաճառականը :

«Շարաթը երեք տալեռ,» պատասխանեց քարտուղարը :

«Լաւ, ուրեմն, թող այս տղան ընէ այն գործը չորս տալեռ շաբաթականով,» ըսաւ վաճառականը, և յետոյ դառնալով տղուն որ ապշած կեցեր էր, ըսաւ անոր, «Սիրելի որդեակ, գնա այն քարտուղարին զոր կը տեսնես, և ըսէ քու անունդ և թէ ուր կը բնակիս, և այնուհետև վաղէ տուն և ըսէ մօրդ թէ դուն գործ մը գտար չորս տալեռ շաբաթականով : Եկուր հոս երկուշաբթի առաւօտ, և կ'ըսեմ քեզ թէ ինչ պիտի ըլլայ գործդ : Ահա քեզ կու տամ կանխաւ մէկ տալեռ, ես դայս կը սեպեմ քու առաջին շաբթուան վարձքիդ հաշուոյն : Գնա հիմա :»


Փոքրիկ թովմաս վաճառատունէն դուրս ցատկեց նետի նման : Եւ ի՞նչ պէս կը վաղէր փողոցն ի վեր : Ի՞նչ պէս արագ ելաւ վեր ճարճատող սանդուղէն որ կը տանէր իւր մօր սենեակը : Այն ինչ մտաւ սենեակէն ներս, վաղեց անոր մէկ կողմէն միւսը ձեռուրներն իրարու զարնելով և ցատկաբերով աստ և անդ և գոչելով կրկին և կրկին, «Մայր, ես գործ մը գտայ շաբաթը չորս տալեռ վարձքով : Ահա ընդունեցի արդէն առաջին տալեռը որ պէս զի մեզի ուտելիք գնենք : Երբէք մի լար այլ ևս այսուհետև, վասն զի հիմա ես եղայ տունը պահողը :»

Բայց թովմասի մայրը դարձեալ լացաւ անստան. և չէր կրնար չլալ : Առաւ իւր փոքրիկ զաւակը բազկացը մէջ և սեղմեց զնա իւր կուրծքին վրայ : Լացաւ և թափեց անոր վրայ ուրախութեան արտասուք, և յետոյ ի ծունր իջնելով շորհակալութիւն մատոյց Աստուծոյ որ տուած էր իրեն այնպիսի աղնիւ զաւակ մը : Արդ կը տեսնենք ահա թէ փոքրիկ թովմասի որոշումն էր ընել ինչ որ է ուղիղ և թէ ինչ յաջողութիւն եղաւ անոր այն որոշման արդիւնքը :

ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԲՈՒ ՄԸ

Ընդարձակ ազարակի տէր մարդ մը պատեհութիւն ունեցաւ ամբան սկիզբները տեսնել թէ ինչպէս պատժուեցաւ յափշտակիչ թռչուն մը ծիծեռնիկներէ : Զոյգ մը ծիծեռնիկ գըտած էին փոքր սնտուկ մը, և իրենց

բոյնը սկսած էին շինել անոր մէջ : Օր մը մինչ անոնք բացակայ կը գտնուէին անկէ, բու մը եկաւ դրուեց անոնց սնտուկը, և երբ ծիծեռնիկներն եկան երեկոյն, չթողուց անոնց ներս մտնել : Ծիծեռնիկները որ բուէն շատ փոքր են, չիթեցան վայրիկ մի, և չէին դիտեր թէ ինչ ընեն, և քիչ ատենէն թռան մէկդի, և կը թուէր թէ այլ ևս պիտի չաշխատէին տիրանալ սնտուկին : Բայց եթէ բուն այսպէս կը կարծէր, շատ կը սխալէր, քանզի քիչ ատեն ետքը փոքրիկ ծիծեռնիկները դարձան ետ բերելով իրենց հետ բազմութիւն ուրիշ ծիծեռնիկներու, որք անմիջապէս սկսան գործի. անոնց իւրաքանչիւրն առնելով տիղմ, ծեփեցին անով սնտուկին դուռը : Այնուհետև ամէնքը թռան մէկդի : Քանի մը օր ետքը երբ սնտուկը բացուեցաւ բուն մեռած գտնուեցաւ անոր մէջ :



ԶՄՈՒՆԱԼ ԽՈՍՏՈՒՄԸ


Գաղիացի հռչակաւոր զօրավարը Քամարոն, մինչ էր հասարակ զինուոր, յոյժ անձնատուր եղած էր արբեցում թեան մեղքին : Օր մը երբ էր արբած, զարկաւ պաշտօնակալի մը, վասն որոյ դատաւարտեցաւ մահուան : Անոր հրամանատարը որ կը սիրէր զնա քաջութեան համար, յանցանացը ներում ստացաւ խօսք առնելով անոր բերնէն որ բնաւ չխմէ այնուհետև զինի և կամ որեւիցէ ուրիշ ոգելից ըմպելի :

Այն դէպքէն քսան և հինգ տարի ետքը, Քամարոն, իւր ստորին աստիճանէն բարձրանալով եղած էր Զօրավար Քամարոն, և անմահացուցած էր զիւր անուն դիւցազնական նահանջովն Ութըրլուէ : Քաջուելով տուն իւր ընտանեաց մէջ, բնակեցաւ փառիղ ամենուն սէրը և յարգանքը դրուելով : Անոր վաղեմի հրամանատարը, օր մը հրաւիրեց զնա ճաշի, որպէս զի տեսակցէր իւր նախկին ընկերաց ոմանց հետ : Պատուաւոր տեղը յատկացուած էր Քամարոնի, տանուաիրոջ աջակողմի : Յոյժ ընտիր զինի մը զոր միայն մեծ հանդէսներու առթիւ հանել սովորութիւն է, բերուեցաւ սեղան :

«Զօրավար,» ըսաւ ծերունի հրամանատարը, իւր խօսքն ուղղելով Քամարոնի, «պատմէ մեզ ինչ նոր լուր կայ,» և միանգամայն սկսաւ լեցունել Քամարոնի համար բաժակ մը այն զինիէն : Զօրավարը ձեռքովն արգիլեց զնա : Իսկ հրամանատարը կը ստիպէր զնա խմել, ըսելով,

«Բայց, Զօրավար, կը վատհասցունեմ զձեզ թէ այս զինին յոյժ ընտիր է :»

«Այդ բանը չկրնար համոզել զիս խմել,» ըսաւ Քամարոն իսկոյն : Եթէ խմեմ ատկէ հակառակ կը գործեմ պատուոյս և խոստմանս, — իմ խոստմանս՝ զոր ըրի երբ էի ստորին կարգի զինուոր, մուցած էք զայն : Այն օրէն հետէ որ խօսք տուի չխմել որեւիցէ ոգելից ըմպելի, դպած չէ շրթանցս մինչև անգամ կաթիլ մը զինի : Ես աւելի արժէք կը դնեմ իմ խօսքիս և խղճիս վրայ քան թէ քու զինուոյդ :»



ՓՈՒՔՐԻԿ ՄԱՆԿԱՆՑ ՆՈՐ ՕԳՏԱԿԱՆ ԲՈՒԹԻՒՆԸ

Առողջ մանկան մը փոքրիկ մարմինը կ'արձակէ ջերմութիւն մեծ քանակութեամբ : Շուտով կը տաքցունէ որորանը կամ անկողինը երբ կը դուրսի անոր մէջ լաւ ծածկուած :

Երբ Տոյ. Քէրն և նորա ընկերք կը գտնուէին Կրեյնանտի հիւսիսակողմը, սառեցաւ նա մեռնելու մօտ : Այնչափ մասն էր որ անոր բարեկամները մեծ դժուարութիւն կրեցին տաքցունելու համար զնա որ ապրէր դարձեալ : Շատ փորձեր եղան, շատ միջոցներ գործածուեցան դարձեալ տաքցունելու համար անոր պաղած մարմինը, բայց ի զուր :

Հուսկ յետոյ ոմանք խորհուրդ տուին երկու կամ երեք Եսկիմացի մանկիկներ զնել անոր մարմնոյն դէմ անկողնոյն մէջ : Ըրին այնպէս, և տաքցաւ անոր մարմինը և կենդանացաւ : Այնպէս համարուեցաւ թէ եթէ չընէին այսպէս ի դէպ ժամու, կը մեռնէր նա :

Եթէ յիշեալ երեւելի անձը առաջ չէր սիրեր փոքրիկ մանուկները, անշուշտ կը սիրէր զանոնք միշտ այնուհետև : Այն փոքրիկ թխադէմ մանուկները որ այնչափ մօտ կ'ապրին Հիւսիսային բևեռին, աւելի լաւ ծառայութիւն ըրին մահուան դուռն հասնող այն մարդուն՝ քան երկաթ կրակարանները, կամ հանդերձները, և կամ զօրաւոր հեղուկները ոգիները :

Ամերիկայի Մեքսիկայի ընկերութիւն, Երևան, Խմբագիր, Փոխ-խմբագիր, Ֆինանսները եղաւ շուրջ 1895 թ. հունիսի 15 օրը

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈՒ ԳՈՅԱՅԵՍ